


22.12.2016 14:11



**Հարգելի փաստաբաններ,**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր հերթական ժողով հրավիրելու մասին» 21.12.2016թ. № 500-Լ որոշմամբ 2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10<sup>00</sup>-ից երևան քաղաքի Ջաքիյան 2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրություն.
- ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձանց ընտրություն.
- «Փաստաբանի օր» սահմանելու մասին հարց:

1. Ընդհանուր ժողովի օրակարգային հարցերով քվեարկությունը սկսվում է 2017 թվականի փետրվարի 11-ին, ժամը 10<sup>00</sup>-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 17<sup>00</sup>-ին:
2. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը) սկսվում է 2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի հունվարի 19-ին (ներառյալ):
3. «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանները կարող են փաստաբանի օրվա առաջարկները սահմանված կարգով ներկայացնել 2017 թվականի հունվարի 14-ից (ներառյալ) մինչև 2017 թվականի հունվարի 19-ը (ներառյալ):
4. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների և կարգապահական գործը նախապատրաստող անձանց թեկնածուների քարոզչությունը սկսվում է 2017 թվականի հունվարի 20-ից (ներառյալ) և ավարտվում է 2017 թվականի փետրվարի 9-ին, ժամը 18<sup>00</sup>-ին:
5. Յուրաքանչյուր փաստաբան քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:
6. Քվեարկության օրը պետք է ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:
7. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի [www.advocates.am](http://www.advocates.am) կայքէջից:

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 21.12.2016թ. № 500-Լ որոշումը.**

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը.**

**Բեռնել «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը.**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
աշխատակազմ

**Առաջարկվող նորուքյուններ**



**23.10.2013** «ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ»



**12.01.2017** ԾԱՆՈՒՑՈՒՄ՝  
11.02.2017 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ  
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱԿԱՆ  
ԺՈՂՈՎ ԶՐԱՎԻՐԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ



**15.01.2017** 11.02.2017թ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՍ  
ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ  
ԳՐԱՆՑՎԱԾ  
ԹԵԿԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 15.01.2017թ  
ԴՐՈՒԹՅԱՄԲ



**16.01.2017** 11.02.2017թ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ  
ԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ ԿԱՍ  
ԻՆՔՆԱՌԱՋԱԴՐՄԱՄԲ  
ԳՐԱՆՑՎԱԾ  
ԹԵԿԱԾՈՒՆԵՐԻ ԵՎ  
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ  
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ 16.01.2017թ  
ԴՐՈՒԹՅԱՄԲ

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })